ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
2025-2026 ուստարի
10-րդ դասարան
(Տևողությունը՝ 3 ժամ)

Միրելի՛ բարեկամ, մաղթում ենք հետաքրքիր աշխատանք՝ լի ինքնաբացահայտումներով: Բարին ընդ քեզ:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ

Պարսից թագավորը մարդիկ ուղարկեց Հայաստան՝ հողի և ջրի, որ գնան այդ հմայության նյութերը բերեն: Քիչ օրերից հետո եկան ու բերին... Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուրը ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Եվ հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ և նրա ձեռքից բռնած՝ ճեմելով շրջում էր: Խորանում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան.

-Արշա՛կ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու իմ դեմ խստացար, ինձ թշնամի դարձար և ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր:

Արշակ թագավորը ասում է.

-Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալու, բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առջև բերեց, ես հիմա քո առջև եմ, քո ծառան քո ձեռքի տակ է, ինչպես ուզում ես, վարվի՛ր ինձ հետ, եթե կամենում ես, սպանի՛ր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ:

Շապուհ թագավորը, նրա ձեռքից բռնած, շրջում է ճեմելով. անմեղ ձևանալով՝ բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ Արշակը այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում, սաստիկ ըմբոստանալով ու հպարտանալով՝ լեզուն փոխում է, սկսում է խոսել և ասել.

-Հեռո՛ւ ինձանից, չարագո՛րծ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք:

Շապուհը, դարձյալ նրա ձեռքից բռնած, տանում է պարսկական հողի վրա. այն ժամանակ Արշակը զղջում է ասածների համար, խոնարհվում է, նրա ոտքերն է ընկնում, սաստիկ ափսոսում, զղջում է ասածների համար: Իսկ երբ ձեռքից բռնած տանում է հայկական հողի վրա, առաջինից ավելի խիստ է խոսում: Նորից հեռացնում է այդ հողի վրայից, սկսում է խոսքերով ապաշխարել: Առավոտից մինչև երեկո շատ անգամ փորձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում, Արշակը խստանում էր, ամբարտավանանում էր, իսկ խորանի բնական հողի վրա լալիս էր, զղջում:

Երբ երեկո եղավ, Պարսից թագավորի ընթրիքի ժամը հասավ, սովորությունն այնպես էր, որ Հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում միևնույն թախտի վրա՝ իրար մոտ. օրենք էր, որ Պարսից թագավորն ու Հայոց թագավորը մի թախտի վրա էին բազմում, մի գահի վրա: Իսկ այդ օրը նախ պատրաստեցին այնտեղ գտնված բոլոր թագավորների բազմելու տեղերը և ամենից վերջը՝ բոլորից ներքև, Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակին հայկական հող էին շաղ տվել: Նախ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, հետո բերեցին բազմեցրին Արշակ արքային: Նա մի կարճ ժամանակ մնաց մռութները կախած, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհ թագավորին.

-Իմն է այդ տեղը, որտեղ դու բազմել ես։ Վե՛ր կաց այդ տեղից, որ ես բազմեմ, որովհետև մեր տոհմի տեղն է եղել այդ, իսկ եթե ես իմ աշխարհը դառնամ, քեզանից վրեժխնդիր կլինեմ։

Այն ժամանակ պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի պարանոցը, ոտքերն ու ձեռքերը, տանել նրան Անդմըշն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ մինչև մեռնի։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՄԵՆ ԲԱՆՈՎ

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին։ Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ։ Նա Կյուրոսին աջակից եղավ՝ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով՝ իրեն հնազանդեցրեց և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս՝ ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը։

Եվ որ իսկական մարդը, որ սիրում է արիական բարքը և խոհականությունը, չի ուրախանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել։ Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. ոսկու և արծաթի, և՛ պատվական քարերի, և՛ զգեստների, և՛ զանազան գույների, և՛ գործվածքների հարստություններ տղամարդկանց և կանանց համար առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ աստվածանում էին։ Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները՝ հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգերով, նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով և երկաթե զգեստներով։ Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց զրահների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու։ Նա խաղաղություն և շենություն գցեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով։

Այս և ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի էին մարդուն։ Եվ այս գրքում ինչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած զովեստներն ու պատմությունը երկարել։ Նա, ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով, ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի
զգեստը։

***

1. Ո՞րն է «Արշակ և Շապուհ» հատվածի հիմնական ասելիքը։ 2 մ.

2. Երկու տեքստերից ի՞նչ փաստեր կընտրես՝ ցույց տալու համար արքաների նմանությունները կամ տարբերությունները։ 3 մ.

3. Ինչպե՞ս է Խորենացին ներկայացնում Տիգրանի կերպարը։ Ի՞նչ հատկանիշներով է նա առանձնանում մեր մյուս թագավորներից։ 5 մ.

4. Համաձա՞յն ես Արշակի գործողություններին։ Արդյոք խելամի՞տ էր հայրենի հողից ու ջրից ստացած ուժը նման ձևով կիրառելը։ Կարո՞ղ ես արդարացում գտնել նրա ոչ դիվանագիտական վարքագծի համար։ Հիմնավորի՛ր դիտարկումդ։ 10 մ.

5. Ընդունելի՞ ես համարում, որ օտար հողի վրա Հայոց արքան իր հակառակորդին ստրկահաճորեն ասի. «…եթե կամենում ես, սպանի՛ր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»։ Կարո՞ղ ես առաջարկել Արշակ արքայի պահվածքի այլ տարբերակ, որը հայրենի երկիրը արժանապատվորեն կտաներ խաղաղության և անկախության։ 10 մ.

6.Դու համակարծի՞ք ես, որ Տիգրան արքայի որակները ունեցող պետական գործիչը բոլոր ժամանակներում էլ կարող է ծաղկեցնել երկիրը։ Հիմնավորի՛ր ասելիքդ։ 10 մ.

7. Մովսես Խորենացուց և Փավստոս Բուզանդից մեջբերված այս պատմությունները քեզ ի՞նչ տվեցին, ի՞նչը քեզ հետ կտանես ողջ կյանքիդ ընթացքում և ինչո՞ւ։ 10 մ.

8. Պատկերացրու՝ դու քո ժամանակների շնորհալի պատմիչ ես, կարողանում ես արժևորել և՛ անցյալի, և՛ մեր օրերի ձեռքբերումները, բացերը։ Ի՞նչ դիտարկումներ, խոհեր, նկատառումներ կփոխանցեիր եկող սերունդներին, որպեսզի կարողանան արարել հզոր Հայաստան։ 10 մ.

Ընդամենը՝ 60 միավոր։

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է։
- Գաղափարը չի բխում տրված նյութից։

Միավոր է հանվում, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (2 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար)։

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան